ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25 մարտի, 2014թ., ք. Երևան

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի պաշտոնական բացման

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ 2014 թվականի մարտի 25-ին Երևանի «Բեստ Վեստեռն Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» սրահում:

«Նպատակ է դրված, որ փաստաթուղթը չպետք է լինի շատ մեծ, ծավալուն, այսպես ասած՝ 100 էջանոց, որպեսզի հետո չիմանանք՝ իրականացվեց, չիրականացվեց, որ մասն իրականացվեց: Նպատակն է կոնկրետ հակակոռուպցիոն գործողություններ նախատեսել փաստաթղթով»,-ասաց ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ Արամ Օրբելյանը նոր մշակվելիք հակակոռուպցիոն ռազմավարության մասին:

«Եվրոմիությունն ամրապնդել է իր աջակցությունը քաղաքացիական հասարակությանը ՀՀ-ում, և մենք ճանաչում ենք քաղհասարակության կարևոր դերը ինչպես Կառավարության երկխոսության գործընթացում ընդգրկվելու, այնպես էլ Կառավարությունից հաշվետվություն պահանջելու իր գործողությունների համար»,-նշեց Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարը Տրայան Հրիսթեան:

«Կոռուպցիայի դեմ պայքարը ոչ միայն երկրի իշխանությունների խնդիրն է այլ առաջին հերթին քաղաքացիական հասարակության խնդիրն է, որովհետև եթե քաղաքացիական հասարակությունը չբարձրաձայնի, պահանջատեր չդառնա և օրակարգային չդարձնի այդ խնդիրն իշխանությունների համար, մենք դժվար թե կարողանանք մեծ քայլերով առաջ գնալ և հաղթահարել այս երևույթը»,-կարծում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները, հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նրանց կտրամադրվեն փոքրիկ դրամաշնորհներ, ինչպես նաև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմները ամրապնդելու համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կստեղծվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Միջոցառման շրջանակներում ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը ներկայացրեց ծրագիրը: Միջոցառմանը մասնակցեցին ներկայացուցիչներ միջազգային և պետական մարմիններից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, ԶԼՄ-ներից:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համանպատակ քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճեն: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճեն: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճեն +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: